ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 116 -Ն

«29» սեպտեմբերի 2023 թ.

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2-ՐԴ ԵՎ 7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ «ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ» ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով և 30-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել հանրակրթական ուսումնական հաստատությունների 2-րդ և 7-րդ դասարանների «Օտար լեզուներ» ուսումնական բնագավառի ծրագրերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

9/29/2023

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169 **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

Հավելված
ՀՀ կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարի
2023 թվականի սեպտեմբերի 29-ի
N 116-Ն հրամանի

«ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ» ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԾՐԱԳՐԵՐ

(2-ՐԴ, 7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ)

2-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1. Բարի գալուստ: Ո՞վ եմ ես
2. Ես աշակերտ եմ
3. Ընտանիք
4. Մարմնի մասեր
5. Նախասիրություններ

ԹԵՄԱ 1	
Բարի գալուստ: Ո՞վ եմ ես	
Հիմնական նպատակը	
1. **Ներմուծել** առօրյա շփումներում ծանոթության, ողջույնի և հրաժեշտի տարրական արտահայտություններ: 2. **Ծանոթացնել** աշակերտներին ուսուցչի՝ օտար լեզվով հնչող պարզ խոսքին ու հրահանգներին: **3. Զարգացնել ծանոթության, ողջույնի և հրաժեշտի տարրական արտահայտությունները համատեքստում կիրառելու հմտություն:**	
Վերջնարդյունքներ	
<u>Գիտելիք:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝ 1. թեմատիկ շրջանակում հաճախակի օգտագործվող բառապաշարը, 2. ըստ նմուշ-օրինակի շատ պարզ նախադասությունների կազմությունը:	***<u>Լեզվական կարողություններ:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա՝*** 1. հասկանալ ուսուցչի և դասընկերների կողմից արտաբերված ողջույնի և հրաժեշտի արտահայտությունները, 2. հասկանալ շատ պարզ արտահայտություններով ինչ-որ մեկին ներկայացնող բանավոր խոսքը (մենախոսություն/երկխոսություն), 3. ծանոթանալ՝ ներկայացնելով իրեն, 4. ըստ հաղորդակցական անհրաժեշտության՝ կիրառել ողջույնի ու հրաժեշտի արտահայտություններ և քաղաքավարի դիմելաձևեր, **5. արձագանքել ուսուցչի պարզ հրահանգներին:**
Բովանդակություն	
1. Բարև, դպրոց… 2. Արի ծանոթանանք	

3. Ողջույնի, հրաժեշտի արտահայտություններ և քաղաքավարի դիմելաձևեր	
Առաջարկվող գործունեության ձևեր	**Խաչվող հասկացություններ**
1. Դերախաղ (ծանոթություն): 2. Փոքրիկ բանաստեղծություններ, խաղեր, երգեր:	***Անհատ և հարաբերություններ*** (մարդկային փոխհարաբերությունները ընտանիքում, շրջապատում, համայնքում)
Միջառարկայական կապեր	
Կերպարվեստ: Պատկերել իրեն ընտանիքում/շրջապատում/համայնքում: **Երաժշտություն:** Ունկնդրել և երգել ողջույնի և հրաժեշտի վերաբերյալ երգեր:	
Կապը Հանրակրթության պետական չափորոշչի տարրական ծրագրի վերջնարդյունքների հետ	
S2, S18, S22, S29	

ԹԵՄԱ 2	
Ես աշակերտ եմ	
Հիմնական նպատակը	
1. **Ներմուծել** օտար լեզվի՝ 1) մի շարք տառեր և հնչյուններ (ոչ ավելի քան 10), 2) դասարանում առկա պարագաներն անվանող բառապաշար, 3) պարզ նախադասություն կազմելու համար անհրաժեշտ կառույցներ, 4) համապատասխան քերականական նյութ: 2. **Ծանոթացնել** վանկերից բառեր և բառակապակցություններ կազմելու հնարներին: 3. **Ամրապնդել** օտար լեզվով հնչող պարզ հրահանգների ընկալումը: 4. **Ձևավորել դասարանի և դպրոցական պարագաների նկատմամբ խնամքով վերաբերմունք:**	
Վերջնարդյունքներ	
<u>Գիտելիք:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝ 1. ուսուցանված տառերի գրությունը, դրանց հնչյունային արտաբերման տարբերակները/օրինաչափությունները, 2. դասի ընթացքում հնչող հրահանգների նշանակությունը, 3. դասարանում իրեն շրջապատող իրերի և առարկաների անվանումները:	***<u>Լեզվական կարողություններ:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա՝*** 1. գրել ուսուցանված տառերը և արտաբերել հնչյունները ըստ լեզվի կանոնների և օրինաչափությունների, 2. կարդալ պարզ տառակապակցություններ, բառեր և շատ պարզ նախադասություններ, 3. արձագանքել ուսուցչի շատ դանդաղ, պարզ խոսքին/հրահանգներին, 4. նկարագրել դասարանը, դասարանական պարագաները և դասամիջոցի խաղերը շատ պարզ բառապաշարով, **5. մաքուր պահել դասասենյակը և չփչացնել դասարանի գույքը:**
Բովանդակություն	
1. Մեր դասարանը 2. Դասի ժամանակ (հրահանգներ) 3. Ի՞նչ ենք մենք անում դասամիջոցին (խաղեր, դասընկերներ)	
Առաջարկվող գործունեության ձևեր	**Խաչվող հասկացություններ**

1. Դասարանի նկար/պաստառ («Ես հոգատար եմ»): 2. Դասարանի շատ պարզ նկարագրություն: 3. Դերախաղ: 4. Դպրոցական առօրյայի մասին փոքրիկ բանաստեղծություններ, խաղեր, երգեր:	***Զարգացում*** (նոր գիտելիք, նոր կարողություններ)
Միջառարկայական կապեր	
Մայրենի: Նկարագրել իր դպրոցը, դասասենյակը: **Կերպարվեստ:** Պատկերել դպրոցը կամ դասասենյակը: **Ես և շրջակա աշխարհը:** Ներկայացնել, թե ինչով է սիրում զբաղվել դպրոցում:	
Կապը Հանրակրթության պետական չափորոշչի տարրական ծրագրի վերջնարդյունքների հետ	
S2, S18, S22, S25, S29	

ԹԵՄԱ 3	
Ընտանիք	
Հիմնական նպատակը	
1. **Ներմուծել** օտար լեզվի՝ 1) մի շարք տառեր և հնչյուններ (ոչ ավելի քան 10), 2) ընտանիքի անդամները անվանող բառապաշար, 3) պարզ նախադասություն կազմելու համար անհրաժեշտ կառույցներ, 4) համապատասխան քերականական նյութ: 2. **Ծանոթացնել** վանկերից բառեր և բառակապակցություններ կազմելու հնարներին: 3. **Զարգացնել** շատ պարզ լեզվական միջոցներով ընտանիքը և առօրյան ներկայացնելու հմտություններ: **Խթանել ընտանիքի անդամների նկատմամբ հոգատար և հարգալից վերաբերմունք:**	
Վերջնարդյունքներ	
<u>Գիտելիք:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝ 1. ուսուցանված տառերի գրությունը, դրանց հնչյունային արտաբերման տարբերակները/օրինաչափությունները, 2. ընտանիքի անդամների անվանումները, ընտանեական առօրյան նկարագրող բառեր և արտահայտություններ, թվականներ, քերականական կառույցներ/կաղապարներ:	***<u>Լեզվական կարողություններ:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա՝*** 1. հասկանալ ընտանիք թեմայով հնչող շատ պարզ և կարճ խոսքը, 2. կարդալ պարզ տառակապակցություններ, շատ պարզ բառեր և նախադասություններ, 3. ներկայացնել իր ընտանիքի անդամներին շատ պարզ նախադասություններով, 4. գրել ուսուցանված տառերը, ընտանիքի անդամների անվանումները, 5. ընտանիք և ընտանեկան առօրյա թեմայով տալ շատ պարզ հարցեր և պատասխանել իրեն ուղղված հարցերին, 6. **դրսևորել հոգատար և հարգալից վերաբերմունք ընտանիքի անդամների նկատմամբ:**
Բովանդակություն	
1. Ընտանիքի անդամներ 2. Մեր ընտանիքի առօրյան	
Առաջարկվող գործունեության ձևեր	**Խաչվող հասկացություններ**

1. Երկխոսություն: 2. «Իմ ընտանիքը» պաստառի պատրաստում: 3. Աշխատանք նկարով (պատմել, նկարագրել և այլն): 4. Ընտանեկան առօրյայի մասին փոքրիկ բանաստեղծություններ, խաղեր, երգեր:	***Անհատ և հարաբերություններ*** (մարդկային փոխհարաբերությունները ընտանիքում, շրջապատում)
Միջառարկայական կապեր	
Մայրենի: Ներկայացնել իր և ընկերների առօրյան՝ գտնելով նմանություններ ու տարբերություններ: **Կերպարվեստ:** Պատկերել իր ընտանիքը կամ ընտանիքի անդամներից որևէ մեկին: **Երաժշտություն:** Ունկնդրել և երգել ընտանիքի վերաբերյալ երգեր: **Ես և շրջակա աշխարհը:** Խոսել իր և ընտանիքի անդամների առողջության պահպանման կանոնների մասին:	
Կապը Հանրակրթության պետական չափորոշչի տարրական ծրագրի վերջնարդյունքների հետ	
S2, S18, S22, S30	

ԹԵՄԱ 4	
Մարմնի մասեր	
Հիմնական նպատակը	
1. **Ներմուծել** օտար լեզվի՝ 1) մի շարք տառեր և հնչյուններ (ոչ ավելի քան 10), 2) մարմնի մասերն անվանող բառապաշար, 3) նկարագրական բառապաշար, 4) պարզ նախադասություն կազմելու համար անհրաժեշտ կառույցներ, 5) համապատասխան քերականական նյութ: 2. **Ծանոթացնել** վանկերից բառեր և բառակապակցություններ կազմելու հնարներին: 3. **Զարգացնել** շատ պարզ լեզվական միջոցներով արտաքինը նկարագրելու հմտություններ: **4. Ընդգծել հիգիենայի պարզագույն կանոնների կարևորությունը:**	
Վերջնարդյունքներ	
<u>Գիտելիք:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝ 1. ուսուցանված տառերը, դրանց հնչյունային տարբերակները, արտասանական օրինաչափությունները, 2. մարդու մարմնի մասերը, 3. գույներ և պարզ հատկանիշներ անվանող բառեր, 4. քերականական կառույցները/կաղապարները, 5. հիգիենայի պարզագույն կանոնները:	***<u>Լեզվական կարողություններ:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա՝*** 1. հասկանալ արտաքինը նկարագրող շատ պարզ և կարճ խոսքը, 2. կարդալ շատ պարզ բառերով և նախադասություններով կարճ արտաքինի նկարագրական տեքստեր, 3. շատ պարզ նախադասություններով նկարագրել իր/իր ընկերոջ/իր ընտանիքի անդամներին, 4. գրել շատ պարզ նկարագրական արտահայտություններ, **5. պահպանել հիգիենայի պարզագույն կանոնները:**
Բովանդակություն	
1. Մարդու մարմնի մասերը 2. Արտաքին տեսքի նկարագրություն 3. Հիգիենայի պարզագույն կանոնները	
Առաջարկվող գործունեության ձևեր	**Խաչվող հասկացություններ**
1. Մենախոսություն/ներկայացում: 2. Նկարչություն: 3. Աշխատանք քարտերով և նկարներով:	***Կառուցվածք և գործառույթ*** (մարդու մարմնի կառուցվածքը և խնամքը)

4. Հիգիենայի կանոնների բեմադրում: 5. Հիգիենայի կանոնների պաստառ՝ խմբային նախագիծ:	
Միջառարկայական կապեր	
Ես և շրջակա աշխարհը: Ներկայացնել հիգիենայի կանոնները, օրինակ ատամ/ձեռքեր լվանալու ճիշտ տեխնիկան: **Կերպարվեստ:** Պատկերել մարդու մարմնի մասերը: **Տեխնոլոգիա:** Պատրաստել գլուխկոտրուկ մարմնի մասերի վերաբերյալ:	
Կապը Հանրակրթության պետական չափորոշչի տարրական ծրագրի վերջնարդյունքների հետ	
S2, S18, S22	

ԹԵՄԱ 5	
Նախասիրություններ	
Հիմնական նպատակը	
1. **Ներմուծել** օտար լեզվի՝ 1) մի շարք տառեր և հնչյուններ (ոչ ավելի քան 10), 2) ժամանակ ցույց տվող, նախասիրություններո անվանող բառապաշար, 3) պարզ նախադասություն կազմելու համար անհրաժեշտ կառույցներ, 4) համապատասխան քերականական նյութ: 2. **Ծանոթացնել** վանկերից բառեր և բառակապակցություններ կազմելու հնարներին: 3. **Զարգացնել** շատ պարզ լեզվական միջոցներով սեփական և այլոց նախասիրությունները ներկայացնելու հմտություններ: 4. **Ընդգծել նախասիրությունների կարևորությունը՝ որպես անձի զարգացման միջոց:**	
Վերջնարդյունքներ	
<u>Գիտելիք:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝ 1. ուսուցանված տառերը, դրանց հնչյունային տարբերակները, արտասանական օրինաչափությունները, 2. նախասիրությունների տարբեր տեսակները, դրանց անվանումները, 3. ժամանցային գործողությունների անվանումները, 4. անհրաժեշտ քերականական կառույցները/կաղապարները:	***<u>Լեզվական կարողություններ:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա՝*** 1. հասկանալ նախասիրությունների մասին շատ պարզ և կարճ երկխոսություն կամ մենախոսություն, 2. կարդալ և հասկանալ շատ պարզ բառերով և նախադասություններով կազմված տեքստեր նախասիրությունների մասին, 3. շատ պարզ բառերով և նախադասություններով ներկայացնել իր նախասիրությունները, 4. գրել շատ պարզ բառեր և արտահայտություններ նախասիրությունների մասին, 5. շատ կարճ նախադասություններով զրուցել իր և խոսակցի նախասիրությունների/սիրած զբաղմունքի մասին, 6. **ունենալ մտավոր և/կամ ֆիզիկական**

	կարողությունները զարգացնող նախասիրություններ:
Բովանդակություն	
1. Հանգստի ժամին 2. Ի՞նչ եմ սիրում	
Առաջարկվող գործունեության ձևեր	**Խաչվող հասկացություններ**
1. Մենախոսություն/Ներկայացում: 2. Դերախաղ: 3. Երկխոսություն: 4. Մնջախաղային վիկտորինա: 5. Ցուցադրություն: 6. Պաստառ՝ «Իմ սիրելի ժամանցի ձևը»:	***Անհատական և մշակութային արժեհամակարգ*** (նախասիրությունները որպես ստեղծարարության և ֆիզիկական զարգացման գրավական)
Միջառարկայական կապեր	
Մայրենի: Ստեղծել և լուծել լեզվական խաղեր, գլուխկոտրուկներ նախասիրությունների վերաբերյալ: **Կերպարվեստ:** Պատկերել իր նախասիրությունները: **Երաժշտություն:** Ունկնդրել և երգել նախասիրությունների վերաբերյալ երգեր: **Ֆիզկուլտուրա:** Խաղալ իր նախընտրած խաղերը:	
Կապը Հանրակրթության պետական չափորոշչի տարրական ծրագրի վերջնարդյունքների հետ	
S2, S18, S22, S28, S35	

ՌՈՒՍԵՐԵՆ

КЛАСС	ТЕМЫ	ФОНЕТИКА, ОРФОЭПИЯ, ОРФОГРАФИЯ	ГРАММАТИЧЕСКИЙ МАТЕРИАЛ	СЛОВА И ВЫРАЖЕНИЯ В ПРЕДЕЛАХ ПРЕДСТАВЛЕН

				НЫХ ТЕМ
2 класс **Добуквенный (подготовительный) период** Развитие фонематического восприятия, звуковой и интонационной культуры речи. Упражнения, направленные на развитие и отработку чёткости произношения (звуки, слова). Составление предложений по рисункам, предложенным ситуациям: **Знакомство. В школе. Моя семья. Мои увлечения. Описание внешности.** **Букварный период**	**1. Добро пожаловать. Кто я?** **2. Я ученик.** **3. Семья.** **4. Части тела.** **5. Увлечения.**	Алфавит (А-Я). Буквы: заглавные и строчные. Звуки: гласные и согласные. Йотированные (**е**, **ё**, **ю**, **я**). Сочетания букв (**жи**, **ши**, **чи**, **щи**, **ча**, **ща**, **чу**, **щу**). Слог. Ударение и ритмика.	Использование в речи типовых конструкций с вопросительными словами: **как зовут? кто/что это? кто он/она/они? кто там/тут/здесь? что там/тут/здесь?** Согласие – возражение. (*Это книга Арама? – Да, это книга Арама. – Нет, это книга Ашота.* и т.д.). <u>Морфология. Имя существительное.</u> Названия конкретных предметов (*стол, книга*), лиц (*девочка, учитель*), веществ (*вода, масло*), живых существ (*кошка*, *собака*). Использование в речи падежных форм имени существительного в различных значениях. Именительный падеж: название лица, предмета; лицо активного действия; обращение; идентификация лица. Родительный падеж: лицо, которому принадлежит что-либо (без предлога и с предлогом **у**); отсутствие лица в настоящем времени; название месяца в дате, точная дата события, действия. Винительный падеж: лицо, предмет как прямой объект действия. Предложный падеж: место действия; местонахождение лица, предмета.	**1. Добро пожаловать. Кто я?** Здравствуй, школа… Давай познакомимся. Слова и выражения приветствия, прощания, характеризующие вежливую речь. **2. Я ученик.** Наш класс. На уроке (команды). Перемена (игры, общение). **3. Семья.** Члены семьи. Дужная семья. **4. Части тела.** Части тела человека. Описание внешности. Элементарные правила гигиены. **5. Увлечения.** Чем я люблю заниматься в свободное время**.** **Счёт (1-10), цвета.**

			<u>Имя прилагательное.</u> Выражение признака предмета (*умный ученик, новая школа*). Характеристика качества лица, предмета (*Это новый магазин. У меня есть красивая кукла*.). Использование в речи слов с противоположным значением (*новый – старый*). <u>Имя числительное.</u> Количество предметов, лиц (1-10). <u>Местоимение.</u> Употребление различных разрядов местоимений в речи: личные, вопросительные, притяжательные, указательные. <u>Глагол.</u> Настоящее время. Выражение действия предмета (*читаю – читают, сижу – сидят, висит* и т.д.). Постановка вопросов. (*Кто читает? – Ученик/ученица читает.* и т.д.). Императив в ограниченном наборе от известных глаголов (*встань(те), Читай(те)! Дай(те)!*). Использование в речи слов с противоположным значением (*молчать – говорить*). <u>Частицы</u>. Использование в речи частиц в ограниченном наборе: утверждения (*ладно, хорошо*); выделения (*только, даже*); оценки (*очень*); побуждения (*давай, пусть*). <u>Синтаксис.</u>	

			Использование в речи простых предложений. Знаки препинания в конце предложения. Союзы **и**, **или**. Понятие о подлежащем и сказуемом и их согласование в предложении. Способы выражения грамматического подлежащего: имя существительное или местоимение в форме именительного падежа (*Анна танцует*.). Способы выражения логического подлежащего: имя существительное или местоимение в форме винительного падежа (*Меня зовут Сергей*.); имя существительное или местоимение в форме дательного падежа (*Мне пять лет*.). Способы выражения сказуемого: сочетание личной формы глагола с инфинитивом (*Я иду гулять*.); местоимение в именительном или творительном падеже (*Эта книга моя*.). **Без употребления терминов.**	

7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1. Ոճ և նորաձևություն
2. Երաժշտությունը՝ համամարդկային լեզու
3. Մեր մոլորակը
4. Օլիմպիական և պարալիմպիկ խաղեր
5. Ժամանակի մեքենա
6. Հայտնագործություններ

ԹԵՄԱ 1	
Ոճ և նորաձևություն	
Հիմնական նպատակը	
1. **Ներմուծել** ճաշակ, ոճ և նորաձևություն հասկացությունները: 2. **Ընդլայնել** և **ամրապնդել** ոճին և նորաձևությանն առնչվող բառապաշար և պարզ արտահայտություններ: 3. **Ներմուծել** և **ամրապնդել** թեմային համապատասխան քերականական նյութը: 4. **Զարգացնել** թեմայի շուրջ հաղորդակցական հինգ կարողունակությունները (ունկնդրում, ընթերցանություն, մենախոսություն, գրավոր խոսք, փոխներգործություն): 5. **Խթանել** ոճի՝ որպես ինքնաարտահայտման միջոցի արժևորում: 6. **Ձևավորել քննական և գնահատողական վերաբերմունք նորաձևության նկատմամբ:**	
Վերջնարդյունքներ	
<u>Գիտելիք:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝	***<u>Լեզվական կարողություններ:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա՝***

1. թեմային առնչվող բառապաշարը, 2. տեղեկություններ նորաձևության մեջ ճանաչված դիզայներների մասին: 3. տրված քերականական նյութը:	1. լսել և հասկանալ «Ոճ և նորաձևություն» թեմայով մեդիա հաղորդումների հիմնական իմաստը, 2. կարդալ և հասկանալ «Ոճ և նորաձևություն» թեմայով տեղեկատվական տեքստերի հիմնական բովանդակությունը, 3. պարզ արտահայտություններով ներկայացնել նորաձևության մեջ իրեն հետաքրքրող զարգացումները, 4. ներկայացնել նախապես պատրաստված ելույթ իր նախընտրած ոճի մասին, 5. տալ հարցեր նորաձևության, հագուստի ոճերի և իր նախընտրած ոճի մասին և պատասխանել այս թեմաներով իրեն ուղղված հարցերին, 6. կազմել իր նախընտրած ոճը նկարագրող պարզ տեքստ (80 – 100 բառ), **7. դրսևորել նորաձևության նկատմամբ քննական վերաբերմունք՝ կարևորելով ինքնարտահայտումը անհատական ոճի միջոցով:**
Բովանդակություն	
1. Նորաձևության պատմությունից (ոճ թելադրողները) (նաև ուսումնասիրվող երկրում և Հայաստանում) 2. Հագուստի ոճեր 3. Իմ ոճը	
Առաջարկվող գործունեության ձևեր	**Խաչվող հասկացություններ**
1. Դերախաղ: 2. Սահիկաշար՝ «Ոճեր թելադրողներր»: 3. Նախագիծ՝ «Հագուստի ոճեր» (ցուցադրություն): 4. Տեսահոլովակի դիտում: 5. Քննարկում՝ «Ո՞ճ, թե՞ նորաձևություն»: 6. Հարցում՝ «Հետևու՞մ ենք նորաձևությանը»: 7. Պարզ նկարագրական էսսե՝ «Իմ նախընտրած ոճը»:	***Անհատական և մշակութային արժեհամակարգ*** (արտաքին ազդեցություններ և ինքնարտահայտում)

Միջառարկայական կապեր
Հայոց լեզու: Խոսել ոճային առանձահատկությունների մասին: **Կերպարվեստ:** Տարբերել ոճերը և պատկերել իր նախընտրած ոճը: **ԹԳՀԳ:** Պատրաստել կարճ տեսահոլովակ՝ ճանաչված ոճաբանների մասին:
Կապը Հանրակրթության պետական չափորոշչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ
Հ3, Հ5, Հ12, Հ13, Հ15, Հ22, Հ25, Հ26, Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ33, Հ34, Հ37, Հ42, Հ45

ԹԵՄԱ 2	
Երաժշտությունը՝ համամարդկային լեզու	
Հիմնական նպատակը	
1. **Ներմուծել** երաժշտության համամարդկային լինելու գաղափարը: 2. **Ընդլայնել** և **ամրապնդել** երաժշտության ոճերին և գործիքներին առնչվող բառապաշարը և պարզ արտահայտությունները: 3. **Ներմուծել** և **ամրապնդել** թեմային համապատասխան քերականական նյութը: 4. **Զարգացնել** թեմայի շուրջ հաղորդակցական հինգ կարողունակությունները (ունկնդրում, ընթերցանություն, մենախոսություն, գրավոր խոսք, փոխներգործություն): 5. **Արժևորել երաժշտությունը որպես միջմշակութային, միջանձնային հաղորդակցության և ինքնաարտահայտման միջոց:**	
Վերջնարդյունքներ	
<u>Գիտելիք:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝ 1. թեմային առնչվող բառապաշարը, 2. երաժշտության տարբեր ոճերը, 3. տեղեկություններ հայ և համաշխարհային անվանի երաժիշտների մասին, 4. տրված քերականական նյութը:	***<u>Լեզվական կարողություններ:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա՝*** 1. լսել և հասկանալ երաժշտություն թեմայով հնչող պարզ խոսքը, 2. կարդալ և հասկանալ երաժշտության (ոճերի, գործիքների և այլն) և անվանի երաժիշտների մասին պարզ տեղեկատվական տեքստերի հիմնական բովանդակությունը, 3. ներկայացնել նախապես պատրաստված ելույթ՝ երաժշտության ոճերի և անվանի կոմպոզիտորների/երաժիշտների մասին՝ հիմնավորելով սեփական ընտրությունը և կարծիքը, 4. գրել պարզ տեղեկատվական էսսե՝ ներկայացնելով երաժշտության իր

	նախընտրած ոճը, այդ ոճի մի որևէ ստեղծագործություն՝ հիմնավորելով իր ընտրությունը, 5. քննարկել* երաժշտական ոճերի հիմնական ուղերձները և երաժշտության դերը մարդու կյանքում՝ հիմնավորելով իր կարծիքը, **6. դրսևորել հարգալից վերաբերմունք երաժշտական տարբեր ճաշակների նկատմամբ:** *** Քննարկել – բանավոր և գրավոր փոխազդեցություն**
Բովանդակություն	
1. Երաժշտական տարբեր ոճեր 2. Երաժշտության մեծերը (համաշխարհային և հայ) 3. Երաժշտությունն իմ կյանքում	
Առաջարկվող գործունեության ձևեր	**Խաչվող հասկացություններ**
1. Դերախաղ: 2. Սահիկաշար՝ «Երաժշտության ոճեր» (խմբային աշխատանք): 3. Երաժշտական կատարումներ և մեկնաբանություն: 4. Պաստառ «Երաժշտության մեծերը»: 5. Տեսահոլովակի դիտում: 6. Նախագիծ՝ «Թոփ 10»: 7. Էսսե՝ «Իմ նախընտրած երաժշտական ոճը»:	***Անհատական և մշակութային արժեհամակարգ*** (ստեղծարարություն և գեղագիտական արժևորում)
Միջառարկայական կապեր	
Գրականություն: Ընթերցել որևէ հայտնի երգահանի հուշագրությունները կամ կենսագրությունը: **Արվեստ/Երաժշտություն:** Ունկնդրել և արձագանքել երաժշտական ստեղծագործությանը՝ արտահայտելով իր վերապրած հույզերը և ներկայացնելով տպավորությունները: **ԹԳՀԳ:** Պատրաստել ձայնուղի՝ երաժշտական միքս տարբեր երաժշտական ստեղծագործություններից: **Պատմություն:** Քննարկել հայկական երաժշտական մշակութային ժառանգությունը (Կոմիտաս, Ա. Խաչատուրյան):	
Կապը Հանրակրթության պետական չափորոշչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ	

Ꞅ3, Ꞅ12, Ꞅ13, Ꞅ14, Ꞅ24, Ꞅ25, Ꞅ26, Ꞅ29, Ꞅ30, Ꞅ31, Ꞅ32, Ꞅ33, Ꞅ34, Ꞅ37, Ꞅ42, Ꞅ43, Ꞅ44, Ꞅ45, Ꞅ46

<table>
<tr><td colspan="2">ԹԵՄԱ 3</td></tr>
<tr><td colspan="2">Մեր մոլորակը</td></tr>
<tr><td colspan="2">Հիմնական նպատակը</td></tr>
<tr><td colspan="2">1. Ներմուծել բնության, բնական ռեսուրսների և շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատվության գաղափարը:
2. Ընդլայնել և ամրապնդել մոլորակի բնության, աշխարհի հրաշալիքների և շրջակա միջավայրի պաշտպանության առնչվող բառապաշարը և պարզ արտահայտությունները:
3. Ներմուծել և ամրապնդել թեմային համապատասխան քերականական նյութը:
4. Զարգացնել թեմայի շուրջ հաղորդակցական հինգ կարողունակությունները (ունկնդրում, ընթերցանություն, մենախոսություն, գրավոր խոսք, փոխներգործություն):
5. Ձևավորել պատասխանատու վարքագիծ և հոգատար վերաբերմունք Երկիր մոլորակի նկատմամբ:</td></tr>
<tr><td colspan="2">Վերջնարդյունքներ</td></tr>
<tr><td><u>Գիտելիք:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝

1. թեմային առնչվող բառապաշարը,
2. մոլորակին վերաբերող գլոբալ (նաև էկոլոգիական) խնդիրների մասին,
3. տեղեկություններ բնության և աշխարհի հրաշալիքների մասին,
4. տրված քերականական նյութը:</td><td><u>Լեզվական կարողություններ:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա՝

1. լսել և հասկանալ մեր մոլորակի՝ որպես հրաշալիքի մասին պատմող մեդիա նյութի հիմնական իմաստը,
2. կարդալ և հասկանալ մեր մոլորակի՝ որպես հրաշալիքի մասին պատմող պարզ տեղեկատվական տեքստերի հիմնական բովանդակությունը,
3. ներկայացնել նախապես պատրաստված ելույթ՝ բնապահպանական որևէ խնդրի մասին՝ հիմնավորելով դրա կարևորությունը և արտահայտելով իր կարծիքը,
4. գրել պարզ տեղեկատվական էսսե՝ ներկայացնելով աշխարհի/բնության որևէ հրաշալիք՝ հիմնավորելով իր ընտրությունը,
5. քննարկել իրեն ծանոթ/իր համայնքին վերաբերող բնապահպանական հիմնախնդիրները՝ հիմնավորելով</td></tr>
</table>

	իր կարծիքը և առաջարկելով լուծումներ, 6. **կարևորել Երկիր մոլորակի նկատմամբ պատասխանատու վարքը իր առօրյա կյանքում:**
Բովանդակություն	
1. Աշխարհի հրաշալիքները (նաև բնություն) 2. Ես պատասխանատու եմ մոլորակի համար	
Առաջարկվող գործունեության ձևեր	**Խաչվող հասկացություններ**
1. Դերախաղ: 2. Պաստառ՝ «Աշխարհի հրաշալիքները»: 3. Սահիկաշար՝ «SOS. Երկիր/Երկրի բնապահպանական հիմնախնդիրները» (խմբային աշխատանք): 4. Տեսահոլովակի դիտում, քննարկում: 5. Վիկտորինա՝ «Աշխարհի և բնության հրաշալիքները» (խմբային աշխատանք): 6. Էսսե՝ «Իմ համայնքի բնապահպանական խնդիրը»:	***Կայունություն և փոփոխություն*** (բնության և մարդու ներդաշնակությունը և փոխկապակցվածությունը)
Միջառարկայական կապեր	
Հայոց լեզու: Կազմել տեքստ «Իմ մաքուր մոլորակը» թեմայով: **Համաշխարհային պատմություն:** Ներկայացնել Աշխարհի հրաշալիքների ստեղծման պատմությունը: **ԹԳՀԳ:** Որոնել տեղեկություններ արդի բնապահպանական խնդիրների մասին: **Աշխարհագրություն:** Քարտեզի վրա ցույց տալ առավել աղտոտված երկրներն ու օվկիանոսները: **Կենսաբանություն:** Բացատրել բնության աղտոտման ազդեցությունը կենսահամակարգերի վրա: **Տեխնոլոգիա:** Ճանաչել թափոնների վերօգտագործման և վերամշակման կարևորությունը, պատրաստել կենցաղային իր թափոններից:	
Կապը Հանրակրթության պետական չափորոշչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ	
Հ3, Հ9, Հ10, Հ11, Հ12, Հ13, Հ17, Հ23, Հ24, Հ25, Հ26, Հ28, Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ33, Հ34, Հ37	

<table>
<tr><td colspan="2">ԹԵՄԱ 4</td></tr>
<tr><td colspan="2">Օլիմպիական և պարալիմպիկ խաղեր</td></tr>
<tr><td colspan="2">Հիմնական նպատակը</td></tr>
<tr><td colspan="2">1. Ներմուծել սպորտը՝ որպես առողջ ապրելակերպի, համամարդկային արժեքի և հավասար հնարավորությունների իրացման միջոց գաղափարը:
2. Ընդլայնել և ամրապնդել սպորտին և մարզաձևերին առնչվող բառապաշարը և արտահայտությունները:
3. Ներմուծել և ամրապնդել թեմային համապատասխան քերականական նյութը:
4. Զարգացնել թեմայի շուրջ հաղորդակցական հինգ կարողունակությունները (ունկնդրում, ընթերցանություն, մենախոսություն, գրավոր խոսք, փոխներգործություն):
5. Ձևավորել վերաբերմունք առողջ ապրելակերպի, խտրականության բացառման, ապրումակցման և մարդկանց հավասար հնարավորությունների նկատմամբ:</td></tr>
<tr><td colspan="2">Վերջնարդյունքներ</td></tr>
<tr><td><u>Գիտելիք:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝

1. թեմային առնչվող բառապաշարը,
2. մասսայական սպորտաձևերի մասին,
3. հայ և օտարազգի օլիմպիական և պարալիմպիկ չեմպիոններին,
4. տրված քերականական նյութը:</td><td><u>Լեզվական կարողություններ:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա՝

1. լսել և հասկանալ տարբեր սպորտային հաղորդումների, սպորտային լուրերի հիմնական իմաստը,
2. կարդալ և հասկանալ սպորտի, մարզաձևերի, մարզիկների, մարզական իրադարձությունների մասին պատմող պարզ տեղեկատվական տեքստերի հիմնական բովանդակությունը,
3. ներկայացնել նախապես պատրաստված ելույթ օլիմպիական և պարալիմպիկ խաղերի կարևորության մասին՝ արտահայտելով իր կարծիքը,
4. գրել պարզ էսսե՝ ներկայացնելով օլիմպիական որևէ մարզաձև/մարզիկի/սպորտի կարևորությունն իր կյանքում՝ հիմնավորելով իր ընտրությունը և տեսակետը,
5. լրացնել մարզախաղին մասնակցության հայտի</td></tr>
</table>

	ձևաթուղթը՝ նշելով փաստացի տվյալներ, 6. քննարկել մարդու կյանքում սպորտի կարևորությունը՝ հիմնավորելով իր կարծիքը, **7. կարևորել մարդու առողջ ապրելակերպի, խտրականության բացառման, հավասար հնարավորությունների և ապրումակցման անհրաժեշտությունը:**
Բովանդակություն	
1. Օլիմպիական խաղերի պատմությունը 2. Ազգային սպորտաձևեր 3. Չեմպիոնները (ուսումնասիրվող լեզվի երկր(ներ)ում, Հայաստանում, այլուր) 4. Սպորտ բոլորի համար. պարալիմպիկ խաղեր 5. Սպորտն իմ կյանքում	
Առաջարկվող գործունեության ձևեր	**Խաչվող հասկացություններ**
1. Դերախաղ: 2. Սահիկաշար՝ «Հայ օլիմպիական մարզիկները» (խմբային աշխատանք): 3. Պաստառ՝ «Սպորտը բոլորի համար»: 4. Տեսահոլովակի դիտում, քննարկում: 5. Էսսե՝ «Հավասար հնարավորություններ»/ «Սպորտը իմ կյանքում»: 6. Նախագիծ՝ սպորտային մեկնաբան, հարցազրույց մարզիկի/տեղական թիմի հետ:	***Ժամանակ և տարածություն*** (Օլիմպիական խաղերի պատմությունը և դրանց արդի դրսևորումներն ու նշանակությունը)
Միջառարկայական կապեր	
Հայոց լեզու: Ներկայացնել օլիմպիական որևէ մարզաձև/մարզիկի**:** **Ֆիզկուլտուրա:** Ճանաչել հայ օլիմպիական չեմպիոններին: **Համաշխարհային պատմություն:** Ներկայացնել Օլիմպիական պատմությունը հին և նոր ժամանակներում**:** **Կենսաբանություն:** Ներկայացնել հենաշարժողական համակարգի կառուցվածքը և սպորտի ազդեցությունը մարդու օրգանիզմի վրա:	
Կապը Հանրակրթության պետական չափորոշչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ	
Հ3, Հ10, Հ12, Հ13, Հ14, Հ25, Հ26, Հ27, Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ33, Հ34, Հ37, Հ38, Հ40, Հ41, Հ42, Հ45	

ԹԵՄԱ 5	
Ժամանակի մեքենա	
Հիմնական նպատակը	
1. **Ներմուծել** ժամանակի մեջ քաղաքակրթական փոփոխությունների գաղափարը: 2. **Ընդլայնել** և **ամրապնդել** մարդկության պատմության մեջ կարևորագույն իրադարձություններին առնչվող բառապաշար և պարզ արտահայտություններ: 3. **Ներմուծել** և **ամրապնդել** թեմային համապատասխան քերականական նյութը: 4. **Զարգացնել** թեմայի շուրջ հաղորդակցական հինգ կարողունակությունները (ունկնդրում, ընթերցանություն, մենախոսություն, գրավոր խոսք, փոխներգործություն): 5. **Բերել ժամանակի մեջ և ժամանակի հետ քաղաքակրթական փոփոխության/զարգացման կարևորության գիտակցության:**	
Վերջնարդյունքներ	
<u>Գիտելիք:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝ 1. թեմային առնչվող բառապաշարը, 2. մարդկության պատմության մեջ կարևորագույն նշանակություն ունեցող ներկայի և անցյալի իրադարձությունները, 3. տրված քերականական նյութը:	***<u>Լեզվական կարողություններ:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա՝*** 1. լսել և հասկանալ մարդկության պատմության մեջ կարևորագույն իրադարձությունների, անցյալի կենցաղի մասին պատմող մեդիա նյութերի հիմնական բովանդակությունը, 2. կարդալ և հասկանալ մարդկության պատմության մեջ կարևորագույն իրադարձությունների, անցյալի կենցաղի մասին պատմող տեղեկատվական տեքստերի հիմնական բովանդակությունը, 3. ներկայացնել նախապես պատրաստված ելույթ որևէ հիշարժան տարեթվի կամ իրադարձության մասին՝ արտահայտելով և հիմնավորելով իր կարծիքը դրա կարևորության և ազդեցության վերաբերյալ, 4. գրել էսսե՝ նկարագրելով իր ուղևորությունը դեպի անցյալ (80-100 բառ), 5. քննարկել մարդկության պատմության մեջ որևէ հիշարժան տարեթվի կամ

	իրադարձության կարևորությունը՝ հիմնավորելով իր կարծիքը, 6. **կարևորել մարդկության պատմության մեջ հիշարժան դեպքերն ու դեմքերը:**
Բովանդակություն	
1. Հիշարժան դեպքերն ու դեմքերը 2. Ուղևորություն դեպի անցյալ	
Առաջարկվող գործունեության ձևեր	**Խաչվող հասկացություններ**
1. Դերախաղ: 2. Սահիկաշար՝ «Ժամանակի մեքենա»: 3. Պաստառ՝ «Անցյալն ու ներկան»: 4. Տեսահոլովակի դիտում, քննարկում: 5. Էսսե՝ «Անցյալի գաղտնիքները»: 6. Նախագիծ (համեմատում են անցյալի իրողությունները ներկայի հետ):	***ժամանակ և տարածություն*** (անհատների պատմական դերն ու նշանակությունը, մարդկության պատմության շրջադարձային կետեր, անցյալի և ներկայի փոխկապակցվածությունը)
Միջառարկայական կապեր	
Գրականություն: Քննարկել գրողի ստեղծագործական ժամանակաշրջանը: **Համաշխարհային պատմություն:** Ներկայացնել մարդկության պատմության հիշարժան իրադարձություններն ու տարեթվերը: **Աշխարհագրություն:** Քննարկել Երկիր մոլորակի գեոկառուցվածքն անցյալում և ապագայում: **ԹԳՀԳ:** Պատրաստել անցյալի կենսակերպը պատմող տեսանյութ:	
Կապը Հանրակրթության պետական չափորոշչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ	
Հ3, Հ10, Հ12, Հ13, Հ16, Հ25, Հ26, Հ27, Հ28, Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ33, Հ37, Հ44, Հ45	

ԹԵՄԱ 6	
Հայտնագործություններ	
Հիմնական նպատակը	
1. **Ներմուծել** մարդու կյանքում հայտնագործությունների դերի կարևորության գաղափարը: 2. **Ընդլայնել** և **ամրապնդել** հայտնագործություններին և դրանց հեղինակներին առնչվող բառապաշար և արտահայտություններ: 3. **Ներմուծել** և **ամրապնդել** թեմային համապատասխան քերականական նյութը: 4. **Զարգացնել** թեմայի շուրջ հաղորդակցական հինգ կարողունակությունները (ունկնդրում, ընթերցանություն, մենախոսություն, գրավոր խոսք, փոխներգործություն): 5. **Ներկայացնել** մեծանուն հայերին և նրանց հայտնագործությունները հայ և համաշխարհային իրականության մեջ: 6. **Զարգացնել հայտնագործություններով պայմանավորված փոփոխություններն արժևորելու և գյուտերի արդյունքներից պատասխանատու կերպով օգտվելու կարողություն:**	
Վերջնարդյունքներ	
<u>Գիտելիք:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝ 1. թեմային առնչվող բառապաշարը, 2. հայ և օտարազգի անվանի գիտնականների անունները, հայտնագործությունները, 3. տրված քերականական նյութը:	***<u>Լեզվական կարողություններ:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա՝*** 1. լսել և հասկանալ կարևորագույն հայտնագործությունների մասին ուսումնական/հանրամատչելի մեդիա նյութերի հիմնական իմաստը, 2. կարդալ և հասկանալ մեծագույն հայտնագործությունների մասին պատմող պարզ տեղեկատվական տեքստերի հիմնական բովանդակությունը, 3. կարդալ և հասկանալ նոր սարքավորումների օգտագործման ուղեցույցները և հետևել հրահանգներին, 4. ներկայացնել նախապես պատրաստված ելույթ որևէ կարևոր հայտնագործության և դրա հեղինակի մասին՝ հիմնավորելով այդ հայտնագործության կարևորությունը,

	5. գրել էսսե՝ նկարագրելով դեպի ապագա իր ուղևորությունը (80-100 բառ), 6. քննարկել որևէ հայտնագործության ազդեցությունը մարդկանց կյանքի կամ բնության վրա՝ հիմնավորելով իր կարծիքը, **7. գիտակցել հայտնագործությունների՝ որպես փոփոխության նախապայման կարևորությունը, հնարավոր բացասական հետևանքները՝ դրսևորելով պատասխանատու վարք դրանցից օգտվելիս:**
Բովանդակություն	
1. Աշխարհի ամենամեծ հայտնագործությունները 2. Նորագույն հայտնագործություններն ու նրանց ազդեցությունը մարդկանց և բնության վրա 3. Հայ գիտնականների մեծագույն հայտնագործությունները 4. Ուղևորություն դեպի ապագա	
Առաջարկվող գործունեության ձևեր	**Խաչվող հասկացություններ**
1. Դերախաղ: 2. Պաստառ՝ «Հայտնագործությունները մեր կյանքում»: 3. Տեսահոլովակի դիտում և քննարկում: 4. Էսսե՝ «Ուղևորություն դեպի ապագա»: 5. Սահիկաշար՝ «Հայ գյուտարարները»: 6. Նախագիծ՝ «Գյուտեր, որ փոխեցին աշխարհը»: 7. Կլոր-սեղան քննարկում՝ «Հայտնագործությունների հնարավոր հետևանքները»:	***Զարգացում*** (որակական նոր առաջադիմական վիճակի առաջացում)
Միջառարկայական կապեր	
Հայոց լեզու: Ներկայացնել հայոց լեզվի հնդեվրոպական ծագման մասին գիտական բացահայտումները: **Գրականություն:** Քննարկել գրական նորահայտ ժանրերը: **Արվեստ:** Ներկայացնել արվեստում նոր տեխնոլոգիաների կիրառումը: **Աշխարհագրություն:** Ներկայացնել GPS և GIS տեղորոշման համակարգերը և կիրառությունը կենցաղում:	

Քիմիա: Բնութագրել քիմիական ամենամեծ հայտնագործությունները, որ փոխել են մեր կյանքը. անդրադառնալ դրանց ազդեցությանը շրջակա միջավայրի վրա: **Ֆիզիկա:** Բնութագրել ֆիզիկայի ոլորտում ամենամեծ հայտնագործությունները, որ փոխել են մեր կյանքը. անդրադառնալ դրանց ազդեցությանը շրջակա միջավայրի վրա: **Կենսաբանություն:** Բնութագրել կենսաբանության ոլորտում ամենամեծ հայտնագործությունները, որ փոխել են մեր կյանքը. անդրադառնալ դրանց ազդեցությանը շրջակա միջավայրի վրա:
Կապը Հանրակրթության պետական չափորոշչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ
Հ3, Հ9, Հ10, Հ12, Հ13, Հ14, Հ18, Հ25, Հ26, Հ27, Հ28, Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ33, Հ34, Հ37, Հ45, Հ46

ԱՆԳԼԵՐԵՆ

Դասարան	Թեմաներ	Հնչյունաբանություն	Քերականություն
7-րդ դասարան	1. Ոճ և նորաձևություն 2. Երաժշտությունը համամարդկային լեզու 3. Մեր մոլորակը 4. Օլիմպիական և պարալիմպիկ խաղեր 5. Ժամանակի մեքենա 6. Հայտնագործություններ		Special uses of articles: a, an, the, zero Adjectives: -ed and -ing Adjectives: Comparatives and superlatives Adverbs: Comparison Intensifiers: far, much, too, enough Zero and 1st conditional Future simple: will/ going to, predictions and intentions Future continuous Modals: must/have to/ should/ ought to Past continuous vs past simple: when and while Reported speech: Orders and requests Passive voice: present and past simple Connecting words: cause and effect, contrast etc.(first, second, next, to start, to sum up etc.) Prepositions: Adjective+preposition: keen on, interested in, fond of, good at, bad at, aware of, full of, angry with Forming nouns: suffixes -or, -er, -ish, -ion, -ment, -ness prefixes: dis-, un-, in, ex-, anti- etc.

ԳԵՐՄԱՆԵՐԵՆ

Դասարան	Թեմաներ	Քերականություն	Բառեր և արտահայտություններ

7-րդ դասարան	1. Ոճ և նորաձևություն 2. Երաժշտությունը համամարդկային լեզու 3. Մեր մոլորակը 4. Օլիմպիական և պարալիմպիկ խաղեր 5. Ժամանակի մեքենա 6. Հայտնագործություններ	Futurum Adjektivdeklination mit dem bestimmten Artikel Präteritum: *regelmäßige Verben* Pluralbildung der Substantive Zweiteilige Konjunktionen: *nicht nur…sondern auch, entweder…oder* Indirekte Fragen: *W-Fragen, Fragen mit ob* n-Deklination der Substantive Konjunktionen: *obwohl, weil* Passiv: *Präsens, Präteritum* Die Präposition mit Genitiv: *statt* Verben mit Präpositionen Demonstrativpronomen: *der, das, die/die Pl* Pronominaladverbien: *wo+ Präpositionen, da+ Präpositionen* Finalangaben**:** *um…zu, damit* Konjunktionen: *deshalb, trotzdem* Indefinitpronomen: *einer, eins, eine, welche* Verben mit Lokalangaben *(wo+ Dativ/ wohin+ Akkusativ): legen/liegen, stellen/stehen, setzen/sitzen, hängen/hängen* Geschlecht des Substantivs	**1. Mode und Trends** Aus der Modegescichte Design Modemacher Kleidungsstile Mein Stil **2. Musik** Musikinstrumente Musikrichtungen Große Musiker **3. Unser Planet** Umwelt Natur Naturdenkmäler und Weltwunder **4. Olympische und Paralympische Spiele** Die Geschichte der Olympischen Spiele Sportwettkämpfe Unsere Sportsieger **5. Zeitmaschine** Wichtige historische Daten und Ereignisse Zeitreisen **6. Erfindungen und Fortschritt** Die größten Erfindungen der Welt Folgen der Erfindungen Die größten Erfindungen armenischer Wissenschaftler

ՖՐԱՆՍԵՐԵՆ

Դասարան	Թեմաներ	Հնչյունաբանություն	Քերականություն	Բառեր և արտահայտություններ
7-րդ դասարան	1. Ոճ և նորաձևություն 2. Երաժշտությունը համամարդկային լեզու 3. Մեր մոլորակը 4. Օլիմպիական և պարալիմպիկ խաղեր 5. Ժամանակի մեքենա 6. Հայտնագործություններ		Révision de grammaire apprise pour le niveau A2 Les pronoms COD et COI (aux temps composés) Les pronoms adverbiaux EN et Y Les pronoms démonstartifs Les pronoms relatifs simples (qui, que, où, dont, quoi) Le participe présent(lisant, partant, faisant) Le gérondif (en lisant, en mangeant, en nous promenant) Le participe passé	**1. Mode et styles** Vêtements et accessoires Différents styles et tendances 2. **Musique** Genres de musique Instruments musicaux Musiciens célèbres 3. **Notre planète** Les Merveilles du Monde et de la nature Protéger la Planète 4. **Jeux Olympiques et Paralympiques** Jeux olympiques Champions olympiques Personnes à mobilité réduite **5. Machine à remonter le temps** Voyage vers le passé Dates et événements mémorables 6. **Inventions** Les grandes inventions du monde Les grandes inventions des savants armeniiens L’Impact des Inventions sur

				l'homme et la nature

ՌՈՒՍԵՐԵՆ

КЛАСС	ТЕМЫ	ФОНЕТИКА, ОРФОЭПИЯ, ОРФОГРАФИЯ	ГРАММАТИЧЕСКИЙ МАТЕРИАЛ	СЛОВА И ВЫРАЖЕНИЯ В ПРЕДЕЛАХ ПРЕДСТАВЛЕННЫХ ТЕМ
7 класс	**1. Стиль и мода.** **2. Музыка – универсальный (общечеловеческий) язык.** **3. Наша планета.** **4. Олимпийские и паралимпийские игры.** **5. Машина времени.** **6. Открытия.**	Правописание **не**: с именами существительными (*неряха, невежда, ненастье*), с относительными прилагательными (*не шёлковое платье, не братская помощь*), с притяжательными прилагательными (*не собачьи следы, не мамин платок*), с краткими прилагательными (*не рад, не должен, не согласен*), с прилагательными в сравнительной степени (*не лучше, не больше, не меньше, не старше*), с глаголами (*невзлюбить, негодовать, ненавидеть*). Правописание имён прилагательных: с суффиксами -**онн**-, -**енн**-, -**ин**-,	<u>Морфология. Имя существительное.</u> Имена существительные, имеющие только форму единственного числа (*вода, дружба*) или только форму множественного числа (*каникулы, брюки*). Использование в речи падежных форм имени существительного в различных значениях. Родительный падеж в значениях: места с предлогами **напротив**, **среди**, **посредине/посередине**; причины с предлогом **из-за**; исключения с предлогом **кроме**; замещения с предлогом **вместо**. Дательный падеж в значениях: места движения по поверхности с предлогом **по**; времени действия с предлогом **по;** время регулярно повторяющегося действия с предлогом **по**. Творительный падеж в значениях: орудие, средство действия; место с предлогами **перед**, **за**, **над**, **под**, **между**; цель движения с предлогом **за**; характеристика лица, предмета с предлогом **с**. Словообразовательные модели имён	**1. Стиль и мода.** Из истории моды (тот, кто диктует моду). Стиль одежды. Мой стиль. **2. Музыка – универсальный (общечеловеческий) язык.** Разные музыкальные стили. Великие музыканты (армяне и представители других народов). Музыка в моей жизни. **3. Наша планета.** Чудеса света (также природные). Я несу ответственность за планету. **4. Олимпийские и паралимпийские игры.** История Олимпийских игр. Наши чемпионы. Спорт для всех: паралимпийские игры. Спорт в моей жизни. **5. Машина времени.** Памятные даты и события. Путешествие в прошлое. **6. Открытия.** Величайшие мировые открытия. Новейшие открытия и их влияние на людей и природу. Величайшие

		-**ан**-, -**ян**- (*общественный, организационный, гусиный, кожаный, серебряный*). Слитное и раздельное написание имён числительных.	существительных: абстрактное понятие, действие, признак, качество и др. с суффиксами: -**ни(е)**, -**ени(е)**, -**ств(о)**, -**к(а)**, -**ость** (*знание, изучение, создание, слабость, государство*). С помощью сложения основ (*гидроэлектростанция*). <u>Имя прилагательное.</u> Употребление краткой формы имён прилагательных с именами существительными (*богат чем? известен кому? чем?*). <u>Имя числительное.</u> Образование и употребление сложных и составных имён числительных. <u>Глагол.</u> Глаголы движения: однонаправленные и разнонаправленные. Возвратные глаголы. Значение глаголов движения с приставками: **до**- – доведение действия до определённой цели (*доехать, дойти*); **про**- – движение мимо кого-/чего-либо, движение сквозь, внутрь и вперёд, преодоление расстояния (*проехать, пройти*); **за**- – попутное движение куда-нибудь ненадолго (*заехать, зайти*); **об**-, **обо**- – движение вокруг предмета, движение с пребыванием во многих местах (*объехать,*	открытия армянских учёных. Путешествие в будущее.

			обойти); **пере**- – движение, связанное с пересечением пространства (*перелететь*). Словообразование глаголов: с префиксами **до**-, **от**-, **пере**- и др.; префиксами (глаголы движения) **до**-, **от**(**о**)-, **про**-, **за**-, **об**(**о**)-. <u>Наречие.</u> Наречия совместности (*втроём, парами*). <u>Союзы.</u> Союзы: временные (**после того как; прежде чем; перед тем как; пока; пока не**); причинные (**благодаря тому, что; из-за того, что; от того, что**); целевые (**для того чтобы**); условные (**если бы**); сравнительные (**как, как будто**). <u>Частицы.</u> Частицы со значением: вопроса (**ли**); утверждения (**так, вот**). <u>Синтаксис.</u> Использование в речи различных типов простых предложений. <u>Способы выражения пространственных и временных отношений в простом предложении.</u> Целевые отношения – предложно-падежные конструкции (*Здесь хорошие условия для учёбы*.). Причинно-следственные отношения – предложно-падежные конструкции (*Из-за дождя мы не выходили на улицу. Благодаря новой роли актриса стала очень*	

			известной.). Практическое использование в прямой и косвенной речи союзов и союзных слов.	